ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2012- 10.12/445
10.12.2012 թ.

ՀՀ վերաքննիչ քրեական դատարան

Դիմումատու՝
«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ» ՀԿ
Պետական ռեգիստրի վկայական
03 Ա 0704086
հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, ք.Վանաձոր,
Տիգրան Մեծի 59

Պատասխանող՝
ՀՀ Պն վեցերորդ կայազորային
քննչական բաժնի պետ
Վ. Ա. Սմբատյան
հասցե՝ Տավուշի մարզ, ք. Իջևան

Վերաքննիչ բողոք

(ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի ԼԴ/0029/11/12 գործով 30.11.2012թ. կայացրած որոշման դեմ)

ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, նախագահությամբ դատավոր Ռ. Մելքոնյանի, 2012թ. նոյեմբերի 30-ին քննության առնելով Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի 2012թ. հոկտեմբերի 15-ին ներկայացրած դիմումը, կայացրել է որոշում ներկայացված դիմումը մերժելու մասին:

1.Դեպքի նկարագրություն

2012թ. հունիսի 15-ին իր իրավունքների պաշտպանության խնդրով կազմակերպություն է դիմել Գայանե Նորիկի Փահլևանյանը: Վերջինս հայտնել է այն մասին, որ իր դեմ հարուցված քրեական գործի նախաքննության ընթացքում թույլ են տրվել իր իրավունքների մի շարք խախտումներ:

Ստորև ներկայացվում են Գ. Փահլևանյանի կողմից՝ կազմակերպությանն ուղղված դիմումում ներկայացված իր իրավունքների հետևյալ խախտումները:

1. Զորամասի հրամանատար Խաչիկ Ավետիսյանի հետ կատարված առերեսման ընթացքում վերջինս Գ. Փահլևանյանին սպառնացել է «Գիտես՝ քեզ ինչ կանեմ, ինչի եմ ընդունակ» արտահայտություններով: Ըստ Գ. Փահլևանյանի՝ Ջիվան Երեմյանը թելադրել և գրել է տվել մի թուղթ, որը ինքը չի հասկացել՝ ինչ է իրենից ներկայացնում: Դիմումում Գ. Փահլևանյանը ուղղակի նշել է, որ «Ջիվան Երեմյանը շատ բարկացած սկսեց գոռալ, բարկանալ՝ արտահայտելով անվայել բառեր, ինձ մեղադրելով՝ վիրավորել են և ինձ հասցրել ծանր հոգեվիճակի», որի հետևանքով 20.04.2010թ., գտնվելով հոգեպես ծանր վիճակում, ք. Վանաձորի Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցու ներքևի տարածքում կատարել է ինքնասպանության փորձ՝ իրեն նետելով գետը:

2. Գ. Փահլևանյանը նշել է, որ նախնական քննության ընթացքում քննիչ Ա.Աղումյանը վերցրել է իր անձնագիրը, չնայած, որ նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է ստորագրություն չհեռանալու մասին:

3. Գ. Փահլևանյանը նշել է նաև, որ վերը նշված ինքնասպանության փորձից մի քանի օր անց Ա. Աղումյանը իրեն հրավիրել է հարցաքննության, որը տևել է ժամը 11:00-ից մինչև 20:00-ն: Նշված հարցաքննության ընթացքում, գտնվելով ծանր հոգեվիճակում, գրել է քննիչ Ա. Աղումյանի թելադրած ցուցմունքները, որը ինքը չի հասկացել և չի գիտակցել:

4. Ըստ Գ. Փահլևանյանի դիմումի, քննիչն ասել է, որ փաստաբան պետք չէ, նշել է, որ «Ես քեզ կօգնեմ, որ ամեն ինչ լավ կլինի, դու գրի, որ դու հրաժարվում ես քո կամքով փաստաբանից»:

5. Գործի քննության ընթացքում քննիչը, առանց որևէ հիմնավորման, Գ. Փահլևանյանին ստիպել է մուծել 3.000.000 (երեք միլիոն) ՀՀ դրամ, որպես պետությանը պատճառած վնաս:

6. Գ. Փահլևանյանը կազմակերպությանն ուղղված դիմումում հատնել է նաև այն մասին, որ գործի նախաքննության ընթացքում քննիչ Ա. Աղումյանը և Լոռու մարզի կայազորի զին. դատախազ Մարտուն Հախվերդյանը կազմել են փաստաթղթեր և ստիպել իրեն ստորագրել դրանք, ինչպես նաև արագացված դատաքննություն անցկացնելու վերաբերյալ թղթերը:

7. Գ. Փահլևանյանը պահանջել է նշանակել փորձաքննություն, և զորամասի բոլոր փաստաթղթերն ուղարկվել են փորձագիտական կենտրոն: 25.02.2011թ. «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետ Տիգրան Անդրանիկի Սարգսյանը, ծանոթանալով քրեական գործին և փորձաքննության համար ներկայացված նյութերին, 25.02.2011թ. միջնորդություն է ներկայացրել ՀՀ ՊՆ ՀԿԳ քննչական բաժնի պետ ՔԾ պետի տեղակալ Յու. Բաղալյանին, որով խնդրել է փորձաքննության կատարմանը մասնակից դարձնել 03.05.2010թ. և 31.01.2011թ. կազմված ստուգման ակտերի ստուգող մասնագետներին, ինչպես նաև մասնագետներին, ինչպես նաև զորամասի ֆինմասի պետ-գանձապահ Գ. Փահլևանյանին: Մինչդեռ, ըստ Գ. Փահլևանյանի, վարույթն իրականացնող մարմինը նշվածի մասին չի տեղեկացրել իրեն, ավելին, ծանոթացման համար նրան չեն ներկայացրել փորձաքննություն նշանակելու մասին որոշումը, այնուհետև՝ փորձագետի եզրակացությունը:

8. Հարկ է նշել նաև կազմակերպության դիմումում նշված այն փաստի մասին, որ 01.04.2010թ. մինչև 31.12.2010թ. և 01.01.2011թ. մինչև 30.04.2011թ. Գ. Փահլևանյանը չի ստացել որևէ դրամական բավարարում, որի կապակցությամբ ՀՀ ՊՆ ֆինանսական վարչության պետի տեղակալ Ապերյանը նրան ասել է, որ իրեն չի հասնում նման դրամական բավարարում: Գ. Փահլևանյանին չի վճարվել նաև երեք ամսվա վճարը, վերջինս զորամասի հանձնում-ընդունումը կատարել է 30.04.2011թ. և շուրջ 1 տարի գտնվել է ծառայության վայրում, սակայն չի ստացել դրա համար նախատեսված վարձատրությունը:

2. <u>Գործի դատավարական նախապատմությունը</u>

Կազմակերպությունը նախաքննության ընթացքում թույլ տրված խախտումների կապակցությամբ 21.06.2012թ. հանցագործության մասին հաղորդում է ուղարկել ՀՀ գլխավոր դատախազ Ա. Հովսեփյանին՝ խնդրելով ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ խախտումները բացահայտելու և տվյալ արարքը կատարած անձանց պատասխանատվության ենթարկելու, ինչպես

նաև Գ. Փահլևանյանի՝ քրեական գործի նախաքննության ընթացքում խախտված իրավունքները վերականգնելու ուղղությամբ (հանցագործության մասին հաղորդման պատճենը ներկայացված է կից):

2012 թ. հուլիսի 9-ին ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կողմից հաղորդումը ուղարկվել է Լոռու կայազորային զինվորական դատախազ Թ. Ն. Միրզաբեկյանին:

2012 թ. հուլիսի 21-ին ՀՀ զինվորական դատախազության Լոռու կայազորային զինվորական դատախազության կողմից ստացվել է պատասխան գրություն, որը սակայն իր բնույթով չի հանդիսանում որոշում:

Կազմակերպությունը 21.08.2012թ. դիմում է ուղարկել ՀՀ գլխավոր դատախազ Ա. Հովսեփյանին՝ Լոռու կայազորի զինվորական դատախազ Թ. Ն. Միրզաբեկյանին քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելուն պարտավորեցնելու պահանջի մասին:

13.09.2012թ. ՀՀ ՊՆ վեցերորդ կայազորային քննչական բաժնի պետ Վ. Ա. Սմբատյանը, վերանայելով իր վարույթում նախապատրաստված թիվ 94 նյութերը, կայացրել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում:

02.10.2012թ. կազմակերպության կողմից բողոք է ուղարկվել ՀՀ զինվորական դատախազ Գևորգ Կոստանյանին՝ խնդրելով վերացնել ՀՀ ՊՆ վեցերորդ կայազորային քննչական բաժնի պետ Վ. Ա. Սմբատյանի 13.09.2012թ. քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը:

09.10.2012թ. ՀՀ զինվորական դատախազության Լոռու կայազորի զինվորական դատախազի տեղակալ Ա. Ա. Զաքարյանի կողմից կայացվել է կազմակերպության նախագահ Ա. Սաքունցի բողոքը մերժելու մասին որոշում, որը ստացվել է սույն թվականի հոկտեմբերի 13-ին:

15.10.2012թ. կազմակերպությունը դիմում է ներկայացրել ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ ՀՀ ՊՆ վեցերորդ կայազորային քննչական բաժնի պետ Վ. Ա. Սմբատյանի 13.09.2012թ. քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելու և քրեական գործ հարուցելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

14.11.2012թ. կազմակերպության կողմից ներկայացված դիմումն ըստ տարածքային ընդդատության ուղարկվել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարան:

30.11.2012թ. Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանը կայացրել է դիմումը քննության առնելու որոշում, որի արդյունքում կայացրել է դիմումը մերժելու մասին որոշում:

3. Վերաքննիչ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը

3.1 Կազմակերպության կողմից ներկայացված հաղորդման հիման վրա, որպես հիմնավորում, նախ 13.09.2012թ. քրեական գործի հարուցումը մերժելու մասին ՀՀ ՊՆ վեցերորդ կայազորային քննչական բաժնի պետ Վ. Ա. Սմբատյանի որոշմամբ, իսկ ապա նշված որոշման դեմ բերված բողոքը մերժելու մասին 09.10.2012թ. Լոռու կայազորի զինվորական դատախազի տեղակալ Ա. Ա. Զաքարյանի որոշմամբ ավելի մանրամասն ներկայացվել է Գ. Փահլևանյանի վերաբերյալ հարուցված քրեական գործի նյութերով «հաստատված» և «հիմնավորված» տվյալները, այլ կերպ ասած, վարույթն իրականացնող մարմնի կողմից չի իրականացվել պատշաճ քննություն՝ այդպիսով խախտելով ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ ամրագրված մի շարք նորմեր:

Այսպես, քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերն ամրագրում են, որ «Քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, պարզել ինչպես կասկածյալի և մեղադրյալի մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրանց արդարացնող, ինչպես նաև նրանց պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Կասկածյալի, մեղադրյալի և նրանց պաշտպանի հայտարարություններն իրենց անմեղության, կասկածյալին կամ մեղադրյալին արդարացնող, իրենց պատասխանատվությունը մեղմացնող ապացույցների առկայության մասին, ինչպես նաև քրեական դատավարության ընթացքում օրինականության խախտումների վերաբերյալ բողոքները պետք է մանրակրկիտ ստուգի քրեական վարույթն իրականացնող մարմինը»:

Սույն օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն՝ «Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը պարտավոր են իրենց իրավասության սահմաններում քրեական գործ հարուցել հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում, օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները ձեռնարկել հանցագործություն կատարած անձանց և հանցագործության, ինչպես նաև դրա կատարման հանգամանքները բացահայտելու համար»:

Մինչդեռ, ինչպես նշվեց վերը, վարույթն իրականացնող մարմնի կողմից որևէ էական հիմնավորում չի ներկայացվել, պարզապես կատարվել է Գ. Փահլևանյանի դեմ հարուցված, ինչպես նաև ինքնասպանության փորձի հասցնելու վերաբերյալ գործերի շրջանակներում կատարված նախաքննության ընթացքում պարզված հանգամանքերի մեկնաբանում, ինչը սակայն չի հանդիսանում պատշաճ քննություն հաղորդմամբ ներկայացված տեղեկությունները պարզելու համար: Մասնավորապես, այդ ընթացքում վարույթն իրականացնող մարմինը պարտավոր էր կատարել օրենսդրությամբ նախատեսված մի շարք քննչական գործողություններ, ձեռք բերել ապացույցներ, որոնք կարող էին փաստել հաղորդմամբ ներկայացված տեղեկությունների իսկությունը կամ դրանց անհիմն լինելը: Սակայն, ուղղակիորեն վկայակոչելով քրեական գործով կատարված քննության ընթացքում ձեռք բերված փաստերը, ապացույցները, վարույթն իրականացնող մարմինը դրանք բավարար է համարել քրեական գործի հարուցման առիթն անօրինական լինելու կամ հիմքերի բացակայությունը փաստելու համար, այդպիսով դրսևորելով անգործություն իր՝ օրենսդրությամբ ամրագրված պարտականությունների կատարման վերաբերյալ:

13.09.2012թ. որոշմամբ (14-րդ և 17-րդ պարբերություններ) Վ. Ա. Սմբատյանը նշել է, որ Գ. Փահլևանյանի շահերի պաշտպան Մ. Դավթյանի կողմից ՀՀ վերաքննիչ քրեական դատարան ներկայացված վերաքննիչ բողոքը 29.05.2012թ. որոշմամբ մերժվել է՝ օրինական ուժի մեջ թողնելով 31.01.2012թ. Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավճիռը, իսկ պաշտպան Վ. Զուտնաչյանի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքը 10.08.2012թ. վերադարձվել է: Սակայն, Վ. Ա. Սմբատյանը հաշվի չի առել այն փաստը, որ դատարանի դատավճռով մեղավոր ճանաչվելը, ինչպես նաև գործի դատական քննության ընթացքում սեփական մեղքն ընդունելը դեռևս հիմք չէ ենթադրելու, որ նախաքննության ընթացքում չէին կարող դրսևորվել բռնություն, սպառնալիքներ, ինչպես նաև օրենսդրությամբ ամրագրված այլ իրավունքների խախտումներ, թե նախաքննության մարմինների և թե զորամասի հրամանատար Խաչիկ Ավետիսյանի կողմից:

Կազմակերպության կողմից ներկայացված դիմումի դատական քննության ընթացքում Վ. Սմբատյանը դիմումատուիս է ներկայացրել հաղորդման հիման վրա նախապատրաստված գործի նյութերը: Սակայն, նշված գործի նյութերի ուսումնասիրության արդյունքում հստակ դարձավ, որ դրանք հանդիսանում են Գ. Փահլևանյանի կողմից 18.08.2012թ. ինքնասպանության փորձ կատարելու գործի քննության առթիվ նախապատրաստված նյութերը: Այդ փաստաթղթերից հստակ երևում է, որ դրանք նախապատրաստվել են Գ. Փահլևանյանի դիմումի, այլ ոչ թե կազմակերպության կողմից 21.06.2012թ. ներկայացրած հաղորդման հիման վրա: Հատկապես այն դեպքում, երբ կազմակերպության կողմից հաղորդմամբ ներկայացվել է դեռևս 2010 թվականի ապրիլի 20-ին կատարած ինքնասպանության փորձին: Այսպիսով, կարելի է գալ այն եզրահանգման, որ Վ. Սմբատյանը կազմակերպության հաղորդմամբ ներկայացված փաստերի վերաբերյալ ոչ միայն չի կատարել պատշաճ քննություն, այլև ընդհանրապես որևէ գործողություն չի կատարել և, հիմք ընդունելով նախկին քրեական գործի քննության ընթացքում և ինքնասպանության փորձի հասցնելու վերաբերյալ կատարված քննության ընթացքում ձեռք բերված տեղեկությունները, կայացրել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում:

Դատարանը որոշման վերլուծական մասի 4-րդ պարբերության մեջ (էջ 5) նշել է հետևյալը. «Մինչդեռ հանցագործության հաղորդման կապակցությամբ նախաքննական մարմինը ոչ միայն կարևորել է օրինական ուժի մեջ գտնվող առանձին հանգամանքները, որոնք առնչվում են հաղորդման փաստարկներին, այլև հարցաքննվել են այն բոլոր անձինք, ովքեր վկայակոչվել են Գ. Փահլևանյանի դիմում-բողոքներում: Հարցաքննվել է նաև վերջինս, որը սակայն հրաժարվել է բացատրություն տալ»: Նշված հիմնավորման բովանդակությունից հստակ երևում է, որ նախաքննության մարմնի կողմից հարցաքննվել են այն անձինք, ովքեր վկայակոչված են եղել **Գ. Փահլևանյանի կողմից ներկայացված դիմում-բողոքներում,** սակայն ոչ կազմակերպության կողմից ներկայացված հանցագործության մասին հաղորդմամբ: Վկայակոչված դիմում-բողոքները Գ. Փահլևանյանը ներկայացրել է ինքնասպանության փորձ կատարելուց հետո ինքնասպանության հասցնելու վերաբերյալ նախապատրաստված նյութերի շրջանակներում: Այդ դիմում-բողոքներում Գ. Փահլևանյանը խնդրել է պատասխանատվության ենթարկել իր նկատմամբ հարուցված քրեական գործի շրջանակներում նախաքննության և դատաքննության ընթացքում իր իրավունքները խախտած անձանց, որի արդյունքում ինքը ցանկացել է ինքնասպանություն գործել, սակայն իր ծանոթը կանխել է ինքնասպանությունը: Այսպիսով, դատարանը մեկ անգամ ևս փաստել է կազմակերպության բողոքում նշված այն հիմնավորումը, որ դատաքննության ընթացքում նախաքննության մարմնի կողմից ներկայացված նյութերը հանդիսանում են Գ. Փահլևանյանի կողմից 18.08.2012թ. ինքնասպանության փորձ կատարելու գործի քննության առթիվ նախապատրաստված նյութերը, որի ընթացքում էլ Գ. Փահլևանյանը ներկայացրել է դիմումներ, բողոքներ իր խախտված իրավունքները վերականգնելու նպատակով: Դատարանը նշել է, որ հարցաքննվել է նաև Գ. Փահլևանյանը, ով հրաժարվել է բացատրություն տալ: Դատարանն այստեղ հաշվի է առել Գ. Փահլևանյանից բացատրություն վերցնելու մասին 12.09.2012թ. արձանագրությունը, որտեղ վերջինս նշել է, որ «Առաջադրված հարցերի շուրջ հայտնում եմ, որ իմ դիմումներում ես նշել եմ իրականությունը, այդ կապակցությամբ այլևս բացատրություն չեմ ուզում տալ և հրաժարվում եմ հարցերին պատասխանելուց»: Նշվածի հիման վրա դատարանը եկել է այն եզրահանգման, որ Գ. Փահլևանյանը ընդհանրապես հրաժարվել է բացատրություն տալ, սակայն հաշվի չի առել այն փաստը, որ Գ. Փահլևանյանը նշել է, որ իր դիմումներում ամեն ինչ հայտնել է, այսինքն՝ վկայակոչելով իր կողմից արդեն իսկ ներկայացված դիմումներն ու բողոքները, վերջինս հայտնել է, որ այլևս որևէ նոր տեղեկություն, փաստ չի կարող ներկայացնել և արդեն իսկ հայտնել է իրականությունը:

Դատարանը, սակայն մի դեպքում դիրքորոշում է հայտնել, որ նախաքննության մարմինը հարցաքննել է դիմում-բողոքներում վկայակոչված անձանց, դրանք վերագրելով կազմակերպության կողմից ներկայացված հաղորդման շրջանակներում ձեռնարկված միջոցառումներին, (չնայած, որ ինքնասպանության փորձ կատարելու փաստի առթիվ Վ. Ա. Սմբատյանի վարույթում նախապատրաստված նյութերի 80-րդ էջին անմիջապես հաջորդող 81-րդ էջը 06.09.2012թ. Ա. Աղումյանից բացատրություն վերցնելու մասին արձանագրությունն է), իսկ մյուս կողմից հիմք ընդունելով 12.09.2012թ. բացատրություն վերցնելու մասին արձանագրության բովանդակությունը, հոում չի կատարում Գ. Փահլևանյանի կողմից ինքնասպանության փորձ կատարելու վերաբերյալ նախապատրաստված նյութերի շրջանակներում տրված բացատրությունների, ինչպես նաև ներկայացրած դիմում-բողոքների բովանդակությանը: Սակայն հարց է առաջանում, թե ինչ հիմքով է դատարանը կիրառել հակադարձ սկզբունքը և կազմակերպության կողմից ներկայացված հանցագործության մասին հաղորդումը մերժել՝ հիմք ընդունելով ինքնասպանության փորձ կատարելու շրջանակներում վերցված բացատրությունները: Բացի այդ հարկ է անդրադառնալ նաև այն հանգամանքին, որ կազմակերպության կողմից ներկայացված հաղորդմամբ որևէ տեղեկություն չի ներկայացվել Գ. Փահլևանյանի փաստաբան Լարիսա Դոխոյանի կողմից իրավունքների խախտման վերաբերյալ: Նրա կողմից անօրինական գործողություններ կատարելու մասին իր դիմումներում և

բացատրություններում նշել է Գ. Փահլևանյանը՝ ինքնասպանության փորձ կատարելու վերաբերյալ նախապատրաստված նյութերի շրջանակներում: Սակայն Լ. Դոխոյանից բացատրություն վերցնելու մասին արձանագրությունը նույնպես ներկայացվել է գործի նյութերի հետ միասին, այսինքն՝ իբրև կազմակերպության կողմից ներկայացված հանցագործության հաղորդման շրջանակներում նախապատրաստված նյութ: Դատարանը նշելով, որ հարցաքննվել են **բոլոր անձինք**, ի նկատի է ունեցել նաև Լ. Դոխոյանին, սակայն դատարանը ուշադրություն չի դարձրել այն փաստին, որ հաղորդմամբ ներկայացված անձանց շրջանակներում Լ. Դոխոյանի անունը բացակայում է: Հետևաբար, նշվածը ևս մեկ անգամ փաստում է, որ նախաքննության մարմնի կողմից դատարանին և դիմումատուիս ներկայացվել են ինքնասպանության փորձի շրջանակներում նախապատրաստված նյութերը: Հատկապես այն դեպքում, երբ ներկայացված փաստաթղթերում չկա գոնե մեկ փաստաթուղթ, որտեղ վկայակոչվի կազմակերպության կողմից ներկայացված հաղորդումը կամ դրանում նշված որևէ փաստ կամ հանգամանք:

Այսպիսով, կարելի է գալ այն եզրահանգման, որ նախաքննության մարմինը չի կատարել պատշաճ քննություն կազմակերպության հաղորդման հիման վրա, իսկ դատարանը որևէ ուշադրության չի արժանացրել կազմարկերպության ներկայացրած փաստերն այն մասին, որ ներկայացված նյութերը ինքնասպանության փորձի վերաբերյալ նախապատրաստված նյութերի պատճեններն են և ոչ թե կազմակերպության կողմից ներկայացված հաղորդման: Այդպիսով դատարանը գտել է, որ նյութերում բացակայում են քրեական գործի հարուցման հիմքերը, այլ խոսքով առկա չէ անձի իրավունքների և ազատությունների խախտման փաստ:

3.2 29.11.2012թ. կազմակերպության կողմից դատարան է ներկայացվել դիմումի լրացում, որտեղ ներկայացվել են վարույթն իրականացնող մարմնի կողմից թույլ տրված ընթացակարգային խախտումներ: Մասնավորապես, դիմումի լրացման մեջ նշվել է, որ Վ. Ա. Սմբատյանը, քննելով 21.06.2012թ. ներկայացված հանցագործության մասին հաղորդումը, խախտել է քրեադատավարական օրենսդրության 180-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված 10-օրյա ժամկետը՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելով միայն 13.09.2012 թվականին: Մինչդեռ, դատարանն իր որոշմամբ որևէ անդրադարձ նշված հարցին չի կատարել՝ այդպիսով խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:

4. <u>Վերաքննիչ բողոքի պահանջը</u>

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հիմք ընդունելով 361-379, 380[1], 381-րդ հոդվածները,

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ

Վերաքննիչ բողոքը ընդունել վարույթ: Բեկանել Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2012թ. նոյեմբերի 30-ի որոշումը, ընդունել նոր դատական ակտ, վերացնել ՀՀ Պն վեցերորդ կայազորային քննչական բաժնի պետ Վ. Ա. Սմբատյանի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին 13.09.2012թ. որոշումը:

Կից ներկայացնում եմ՝

1. Կազմակերպության կողմից ներկայացված հանցագործության մասին հաղորդման պատճենը
2. Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 30.11.20112թ. որոշման պատճենը
3. Վերաքննիչ բողոքի պատճենը կողմին և դատական ակտը կայացրած դատարանին ուղարկելու փաստը հավաստող անդորրագրերը:

Կազմակերպության ներկայացուցիչ՝ Ա. Զալյան

azalyan@hcav.am

ՀՔԱ Վանաձոր
HCA Vanadzor
06926024